

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Համապարփակ եկամտի մասին համախմբված հաշվետվություն	1
Ֆինանսական դրության մասին համախմբված հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	3
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն.....	4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1.	Հիմնական գործունեության նկարագրություն.....	5
2.	Պատրաստման հիմունքներ	5
3.	Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր	6
4.	Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ	11
5.	Հասույթ	12
6.	Ինքնարժեք	12
7.	Վարչական ծախսեր	12
8.	Ֆինանսական եկամուտներ/(ծախսեր)	13
9.	Շահութահարկի գծով ծախս.....	13
10.	Առևտրային և ալ դեբիտորական պարտքեր.....	13
11.	Ժամկետային ավանդներ.....	13
12.	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.....	13
13.	Բաժնետիրական կապիտալ	14
14.	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14
15.	Ռիսկերի կառավարում և իրական արժեքի չափում	14
16.	Գործարքներ փոխկապակցված անձանց հետ	16

Համապարփակ եկամտի մասին համախմբված հաշվետվություն**2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2024թ.	2023թ.
Հասույթ	5	2,401,518	2,307,452
Ինքնարժեք	6	(1,523,381)	(1,444,265)
Համախառն շահույթ		878,137	863,187
Վարչական ծախսեր	7	(486,087)	(494,562)
Գործառնական այլ եկամուտներ		119,639	2,032
Գործառնական այլ ծախսեր		(15,936)	(15,919)
Ֆինանսական (ծախսեր) / եկամուտներ	8	(17,439)	8,514
Շահույթ մինչև շահութահարկ		478,314	363,252
Շահութահարկի գծով ծախս	9	(93,667)	(67,993)
Տարվա զուտ շահույթ և համապարփակ եկամուտ		384,647	295,259

Ստորագրվել և հավանության է արժանացել թողարկման համար ղեկավարության կողմից :

Գլխավոր տնօրեն՝



Էրիկ Հայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝



Լիլիթ Լազարյան

29 ապրիլի 2025թ.



Ֆինանսական դրության մասին համախմբված հաշվետվություն**2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2024թ.	2023թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ		166,080	217,182
Հիմնական միջոցներ		123,887	129,023
Հետաձգված հարկային ակտիվ		19,231	17,891
		309,198	364,096
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	475,296	347,035
Կանխավճարներ		31,824	79,472
Ժամկետային ավանդներ	11	551,372	257,108
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	262,808	371,684
		1,321,300	1,055,299
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		1,630,498	1,419,395
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բաժնետիրական կապիտալ	13	1,000	1,000
Կուտակված շահույթ		859,169	474,522
		860,169	475,522
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն		176,758	223,105
		176,758	223,105
Ընթացիկ պարտավորություններ			
Շահութահարկի գծով պարտավորություն		44,372	39,263
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	549,199	681,505
		593,571	720,768
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		1,630,498	1,419,395

Գլխավոր տնօրեն՝

Էրիկ Հայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝

Լիլիթ Լազարյան

29 ապրիլի 2025թ.



**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված
հաշվետվություն
2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը կապիտալ
2023թ. հունվարի 1		1,000	639,312	640,312
Հաշվետու տարվա շահույթ			295,259	295,259
Շահաբաժիններ			(460,049)	(460,049)
2023թ. դեկտեմբերի 31	13	1,000	474,522	475,522
Հաշվետու տարվա շահույթ			384,647	384,647
2024թ. դեկտեմբերի 31	13	1,000	859,169	860,169

Գլխավոր տնօրեն՝

Էրիկ Հայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝

Լիլիթ Լազարյան

29 ապրիլի 2025թ.



Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն**2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեություն			
Շահույթ մինչև շահութահարկը		478,314	363,252
Ճշգրտումներ մինչև շահութահարկը շահույթը զուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածություն		51,102	38,326
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածություն		46,459	24,745
Տոկոսային եկամուտներ		(19,889)	(9,711)
Տոկոսային ծախսեր		20,164	17,475
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնաս/ (օգուտ)		17,164	(16,278)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունը		593,314	417,809
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (ավելացում) / նվազում		(140,969)	62,148
Կանխավճարների նվազում/ (ավելացում)		47,785	96,611
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի (նվազում) / ավելացում		(119,714)	278,936
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		380,416	855,504
Վճարված շահութահարկ		(89,897)	(99,606)
Ջուտ դրամական հոսքեր ստացված/(օգտագործված) գործառնական գործունեությունից		290,519	755,898
Ներդրումային գործունեություն			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերում		–	(255,508)
Հիմնական միջոցների ձեռքբերում		(41,322)	(120,095)
Ժամկետային ավանդների տեղաբաշխում		(292,651)	–
Ստացված տոկոսային եկամուտ		10,170	9,637
Ջուտ դրամական հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունից		(323,803)	(365,966)
Ֆինանսական գործունեություն			
Վարձակալության գծով պատրավորության (նվազում) / ավելացում		(66,512)	205,630
Վճարված շահաբաժիններ		–	(460,049)
Ջուտ դրամական հոսքեր օգտագործված ֆինանսական գործունեությունից		(66,512)	(254,419)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(9,080)	9,336
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում) / ավելացում		(108,876)	144,849
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		371,684	226,835
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	12	262,808	371,684

Գլխավոր տնօրեն՝

Էրիկ Հայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝

Լիլիթ Լազարյան

29 ապրիլի 2025թ.



1. Հիմնական գործունեության նկարագրություն

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում 1999թ. հուլիսի 20-ին: 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 103 աշխատակից:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես կենտրոն:

Ընկերությունն աուդիտորական ծառայությունների մատուցման լիզենզիա է ստացել Հայաստանի Հանրապետության կառավարությունից և ծառայություններ է մատուցում ձեռնարկատիրական և բանկային ոլորտի հաճախորդներին:

Հայկական և Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններին Ընկերությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.

- ▶ Աուդիտորական ծառայություններ,
- ▶ Հարկային և իրավաբանական խորհրդատվություն,
- ▶ Խորհրդատվական ծառայություններ:

Ընկերությունը 2024թ. դեկտեմբերին հիմնել է «Էրնսթ ընդ Յանգ Լո» ՍՊԸ դուստր ընկերությունը, որը զբաղվում է իրավաբանական ծառայությունների մատուցմամբ, և որի միակ սեփականատերը հանդիսանում է «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ն:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՀՀՄՍ»), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ «ՀՀՄՍԽ») կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (այսուհետ՝ «ՀՀՄՍԿ»):

Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի:

Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՀՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2024թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել: Սույն ստանդարտներն ու փոփոխությունները էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման առկա ստանդարտների հետևյալ փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2024թ. հունվարի 1-ին սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝

- ▶ Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում,
- ▶ ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներում,
- ▶ Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում:

Վերոնշյալ ոչ մի փոփոխություն նշանակալի ազդեցություն չի ունեցել Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչում

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումն իրականացվում է, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին: Սկզբնական ճանաչման ժամանակ պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվները և պարտավորությունների դասակարգումը (առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, կրեդիտորական պարտքեր) կախված է վերջիններիս պայմանագրային դրամական հոսքերի բնույթից: Ընկերությունը սկզբնապես չափում է տվյալ ֆինանսական ակտիվներն ամորտիզացված արժեքով:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը և բանկերում պահվող մնացորդները, որոնք կարճ ժամանակամիջոցում կարող են փոխարկվել կանխիկի:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Վարձակալություն

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար՝ բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների:

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը: Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Ընկերության գնահատականի փոփոխություն, եթե Ընկերությունը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրազորելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների գծով վարձավճարները Ընկերությունը ճանաչում է որպես ծախս գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն փոփոխված են նախորդի համեմատ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ եկամտի մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվությունները հաստատված են թողարկման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի վճարում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք վերաբերում են Ընկերության գործունեությանը: Այդ հարկերը ներառված են համապարփակ եկամտի մասին հաշվետվության «Վարչական ծախսեր» հոդվածում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր
(շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայություն (տարի)	Դրույք (%)
Համակարգիչներ	3	33.3
Սարքավորումներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ ընույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման և հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ եկամտի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ ընույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական այլ եկամուտներում:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Զբաղիված շահույթ

Զբաղիված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաղիված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են միևնույն հաշվետու ամսաթիվը ներառյալ: Միևնույն հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո միևնույն ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններում:

Եկամուտների և ծախսերի ճանաչումը

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Ընկերություն, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արտարժույթի վերահաշվարկ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Ընկերության գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները սկզբնապես գրանցվում են գործառնական արժույթով, փոխարկվում են՝ կիրառելով գործարքի պահին գործող փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվության մեջ որպես ֆինանսական եկամուտներ/(վնասներ): Ոչ դրամային հոդվածների համար, որոնք արտարժույթով չափվում են սկզբնական արժեքով, վերահաշվարկվում են գործարքի ամսաթվի փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

2024 և 2023 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր համապատասխանաբար 396.56 և 404.79 ՀՀ դրամ:

Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել:

► *ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում*

2024 թվականի ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտին: ՖՀՄՍ 18-ը նոր պահանջներ է ներկայացնում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման գծով՝ ներառյալ որոշ հանրագումարներ և միջանկյալ հանրագումարներ: Ավելին, կազմակերպությունները պարտավոր են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտներն ու ծախսերը դասակարգել՝ ըստ հինգ կատեգորիաների՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ, ընդհատված գործառնություններ, որոնցից առաջին երեք կատեգորիաները նոր են:

Այն նաև պահանջում է նոր, ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների, եկամուտների և ծախսերի միջանկյալ հանրագումարների բացահայտում և ներառում է ֆինանսական տեղեկատվության համախմբման և տարանջատման նոր պահանջներ՝ հիմնված հիմնական ֆինանսական հաշվետվությունների (PFS) և ծանոթագրությունների «դերերի» վրա:

Բացի այդ, ՀՀՄՍ 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են գործառնություններից դրամական հոսքերի՝ անուղղակի մեթոդով որոշելու մեկնարկային կետի փոփոխություն՝ «շահույթ կամ վնաս»-ից դեպի «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից ու տոկոսագումարներից դրամական հոսքերի դասակարգման ընտրության հնարավորության վերացում: Ավելին, որոշակի համապատասխան փոփոխություններ են կատարվել մի քանի այլ ստանդարտներում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՍ 18 ստանդարտը և այլ ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: Ներկայումս Ընկերությունն աշխատում է բացահայտել այն բոլոր փոփոխությունները, որոնք ազդեցություն կունենան հիմնական ֆինանսական հաշվետվություններին և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

- ▶ *Փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում* – Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ: Ընկերությունը ներկայումս գնահատում է այն ազդեցությունը, որը փոփոխությունը կունենա հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:
- ▶ *ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ* - Փոխանակելիության բացակայություն, որը հստակեցնում է, թե ինչպես պետք է կազմակերպությունը գնահատի՝ արդյոք արտարժույթը փոխանակելի է, և ինչպես պետք է որոշել սփոթ փոխարժեքը փոխանակելիության բացակայության դեպքում: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվություններին վրա:
- ▶ *ՖՀՄՍ 19 Դուստր կազմակերպություններ՝ առանց հրապարակային հաշվետվողականության*: Բացահայտումներ, որոնք հնարավորություն են տալիս իրավասու կազմակերպություններին ընտրություն կատարել՝ կիրառելու նվազեցված պահանջները բացահայտումների նկատմամբ՝ միաժամանակ կիրառելով հաշվապահական հաշվառման այլ ՖՀՄՍ ստանդարտների ճանաչման, չափման և ներկայացման պահանջները: Ընկերությունը ներկայումս գնահատում է այն ազդեցությունը, որը փոփոխությունը կունենա հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Դեկլարությունն ակնկալում է, որ հրապարակված ստանդարտներն ու փոփոխությունները կիրառելիության դեպքում կներառվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ՝ սկսած դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո սկսվող առաջին ժամանակաշրջանից:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են ունենում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները՝ հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք խելամիտ են համարվում տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Սույն ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները կապված են հասույթի՝ ժամանակի ընթացքում կամ ժամանակի որոշակի պահին ճանաչման հետ:

5. Հասույթ

Ընկերությունը հասույթ է ստանում հիմնականում հաճախորդներին մատուցած ծառայություններից, որից՝

	2024թ.	2023թ.
ՀՀ-ում մատուցված	1,287,001	1,363,076
ՀՀ-ից դուրս մատուցված	1,114,517	944,376
Հասույթ	2,401,518	2,307,452

6. Ինքնարժեք

Ինքնարժեքը ներառում է հետևյալ հոդվածները.

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ	1,186,491	1,005,718
Խորհրդատվական ծառայություններ	213,402	346,297
Հիմնական միջոցների մաշվածություն, դրանց նորոգման և սպասարկման ծախսեր	68,292	–
Գործուղման ծախսեր	22,380	18,150
Կրթության և վերապատրաստման ծախսեր	10,821	11,121
Վարձավճարներ	–	19,024
Այլ	21,995	43,955
Ինքնարժեք	1,523,381	1,444,265

Ընկերությունը 2024թ-ին փոփոխել է մաշվածության և ամորտիզացիայի ծախսերի բաշխման մեթոդը՝ դրանք համամասնորեն ճանաչելով ինքնարժեքի և վարչական ծախսերի հոդվածներում:

7. Վարչական ծախսեր

Վարչական ծախսերը ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ.	2023թ.
Խորհրդատվական և SS ծառայություններ	197,508	213,241
Աշխատավարձ	111,457	106,698
Մարքեթինգային ծախսեր	56,341	5,212
Աշխատակիցներին տրամադրված այլ օգուտներ	42,380	41,441
Մաշվածություն և ամորտիզացիա, ՀՄ նորոգման և սպասարկման ծախսեր	29,268	63,071
Այլ հարկերի գծով ծախսեր	9,865	8,950
Սոցիալ-մշակութային միջոցառումներ	6,990	4,789
Հեռահաղորդակցության ծախսեր	6,245	5,509
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	4,295	9,857
Բարեգործական ծախսեր	3,100	4,000
Այլ վարչական ծախսեր	18,638	31,794
Վարչական ծախսեր	486,087	494,562

8. Ֆինանսական (ծախսեր) / եկամուտներ

Ֆինանսական ծախսերը / եկամուտները ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ.	2023թ.
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից (ծախսեր) / եկամուտներ	(17,164)	16,278
Վարձակալության գծով տոկոսային ծախս	(20,164)	(17,475)
Տոկոսային եկամուտ	19,889	9,711
Ֆինանսական (ծախսեր) / եկամուտներ	(17,439)	8,514

9. Հաճութահարկի գծով ծախս

Ընկերությունը Հաճութահարկ է վճարում հայկական ընկերությունների համար գործող 18% դրույքաչափով:

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	95,007	77,648
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(1,340)	(9,655)
Հաճութահարկի գծով ծախս	93,667	67,993

10. Առևտրային և ալ դեբիտորական պարտքեր

Առևտրային և ալ դեբիտորական պարտքերը ներկայացնում են Ընկերության մատուցած ծառայությունների և կատարված աշխատանքների գծով դեբիտորական պարտքեր:

11. Ժամկետային ավանդներ

Ժամկետային ավանդները ներառում են Ամերիաբանկում Ընկերության ներդրված դոլարային ավանդները: Ժամկետային ավանդները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեն մինչև 365 օր ժամկետայնություն և ներդրված են 3.3%-4% տարեկան տոկոսադրույքով:

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվների մնացորդներ	262,808	371,684
Կանխիկը դրամարկում	–	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	262,808	371,684

13. Բաժնետիրական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հայտարարված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 1,000 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 1,000 հազար ՀՀ դրամ):

Ընկերության կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 100 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ անվանական արժեքներով (2023թ.՝ 100 սովորական բաժնետոմսեր):

2023 թվականին Ընկերությունը հայտարարել և վճարել է շահաբաժին՝ 1 բաժնետոմսի դիմաց 4,600,490 ՀՀ դրամ արժեքով:

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ներառում են հետևյալ հոդվածները.

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացված կանխավճարներ	213,884	207,703
Առևտրային կրեդիտորական պարտքեր	179,275	160,365
Արձակուրդայինի պահուստ	95,010	78,405
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	61,030	74,781
Աշխատավարձի գծով պարտքեր	–	160,251
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	549,199	681,505

15. Ռիսկերի կառավարում և իրական արժեքի չափում

Ներածություն

Ընկերության գործունեությանը բնորոշ են բազմազան ֆինանսական ռիսկեր, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Ընկերության առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Ընկերության ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

Ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Ընկերության ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Ընկերության ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը, հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության սահմանաչափերի ընդունելի մակարդակի ապահովումը: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Ընկերության իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Ընկերության ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Ընկերության ռազմավարական պլանավորման մի մասը: Ընկերության ռիսկերի կառավարման սկզբունքներին են դասվում. ձգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը, ֆինանսական դրության կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը, Ընկերության կողմից ստանձնած ռիսկերի համապատասխան հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը:

15. Ռիսկերի կառավարում և իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Ղեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի վերահսկողություն: Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղջված պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով:

31 դեկտեմբերի 2024թ.					
Ցպահանջ կամ մինչև մեկ ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	160,083	75,706	4,516	–	240,305
	160,083	75,706	4,516	–	240,305
31 դեկտեմբերի 2023թ.					
Ցպահանջ կամ մինչև մեկ ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	368,000	27,397	–	–	395,397
	368,000	27,397	–	–	395,397

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի էական արժույթային դիրքեր դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա: Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա ազդեցությունից: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

15. Ռիսկերի կառավարում և իրական արժեքի չափում (շարունակություն)**Արտարժույթի ռիսկ (շարունակություն)**

Արժույթ	Բազիսային կետերի ավելացում 2024թ.	Ջուտ շահույթի զգայունություն 2024թ.
ԱՄՆ Դոլար	10.0%	93,282
Եվրո	10.0%	5,112
Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2024թ.	Ջուտ շահույթի զգայունություն 2024թ.
ԱՄՆ Դոլար	10.0%	(93,282)
Եվրո	10.0%	(5,112)
Արժույթ	Բազիսային կետերի ավելացում 2023թ.	Ջուտ շահույթի զգայունություն 2023թ.
ԱՄՆ Դոլար	10.0%	65,995
Եվրո	10.0%	(741)
Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2023թ.	Ջուտ շահույթի զգայունություն 2023թ.
ԱՄՆ Դոլար	10.0%	(65,995)
Եվրո	10.0%	741

16. Գործարքներ փոխկապակցված անձանց հետ

Գործարքի կողմերը համարվում են փոխկապակցված, եթե կողմերից մեկը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս կողմի կառավարմանը, վերահսկմանը, մասնակցություն ունի մյուս կողմի կանոնադրական կապիտալում, գործնականում վերահսկում է մյուս անձի գործարար որոշումները, կամ գործարքի երկու կողմերն էլ գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ երրորդ կողմի կողմից՝ անկախ կողմերի իրավական կառուցվածքից:

2024 և 2023 թվականների ընթացքում Ընկերության՝ փոխկապակցված կողմերի հետ գործարքների ծավալը կազմել է՝

	Վերահսկվող գործարքներ 2024թ.	Վերահսկվող գործարքներ 2023թ.
Մատուցված ծառայություններ	838,708	440,923
Ստացված ծառայություններ	372,187	423,106

16. Գործարքներ փոխկապակցված անձանց հետ (շարունակություն)

2024 և 2023 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության՝ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները կազմել են՝

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	359,229	172,009
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	178,907	113,824

Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին: